



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 11**

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝  
2018 Թ. ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

**Օրակարգում՝**

1. Ամփոփիչ քննությունների քննական հանձնաժողովների նախագահի հաշվետվության քննարկում:
2. 2017-18 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկում (զեկուցող՝ Ա. Սարգսյան):
3. Ամբիոնների վարիչների թափուր տեղերի համար հայտարարված մրցույթի անցկացում:
4. Ընթացիկ հարցեր:

Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը գիտխորհրդի մասնակիցներին տեղեկացրեց, որ խորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 34-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Դեկանն այնուհետև ծանոթացրեց նիստի օրակարգի հարցերին, որոնք միաձայն ընդունվեցին բաց քվեարկությամբ:

**1-ին հարցի** առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց ամփոփիչ աստեսավորման հանձնաժողովի նախագահ Բ. Գ. Պ., պրոֆ. Գայանե Գևորգյանին: Նա իր խոսքում մասնավորապես ասաց.

« - 2017-18 ուստարում հեռակա բաժնում «Հայ գրականություն» ավարտական աշխատանք է պաշտպանել 15 ուսանող և 7 ուսանող նախորդ տարիներից: Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են՝ գերազանց գնահատական չկա, լավ՝ 7, բավարար՝ 15:

2017-2018 ուստարում «Հայոց լեզու» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել 12 ուսանող, որից 9-ը՝ ժամանակակից հայոց լեզվից, 1-ը՝ հայոց լեզվի պատմությունից, 1-ը՝ լեզվաբանությունից:

Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են՝

ժամանակակից հայոց լեզվի ամբիոն՝ 10 ուսանող, որոնցից *գերազանց* են ստացել 3, լավ՝ 5, բավարար՝ 2 ուսանողներ, հայոց լեզվի պատմության ամբիոն՝ 1 ուսանող, որը ստացել է *բավարար* գնահատական, լեզվաբանության ամբիոն՝ 1 ուսանող, որը ստացել է *լավ* գնահատական:

Ավարտական աշխատանքները ևս անցել է գործող քննակարգին համապատասխան: Ավարտական աշխատանքների թեմաները արդիական էին, բազմազան, ունեին անհրաժեշտ գիտագործնական ուղղվածություն, գիտական և ճանաչողական որոշակի արժեք: Կային նաև զուգադրական բնույթի աշխատանքներ: Ինչպես բովանդակությամբ, այնպես էլ կառուցվածքային ու կատարողական առումով ավարտական աշխատանքները համապատասխանում էին նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Դրանցում հստակ նշված էին նպատակը, խնդիրները և ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը, ուսումնասիրված էր համապատասխան գրականություն, և ներկայացված էին հետազոտության գործնական արդյունքները:

Ուսանողները կարողացան խոսքի տրամաբանական կառուցվածքով, լեզվական իրազեկություններով, թեմայի և աշխատանքի վերաբերյալ հարցերին տրվող պատասխանների և պարզաբանումների, բանավիճելու ու փաստարկներ բերելու կարողություններով արժանանալ համապատասխան գնահատականների: Այնուհանդերձ, կային նաև սակա-

վաթիվ աշխատանքներ, որոնցում մասնակիորեն էր կատարված թեմային առնչվող գրականության վերլուծություն, հիմնավորված չէին սեփական մոտեցումները ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ, թեմաների ձևակերպումները երբեմն շատ ավելի ընդհանրական բնույթ էին կրում, քան դրանցում կատարված աշխատանքն էր:

Ուսանողների պատրաստվածության բարձր մակարդակը, մասնագիտական իրազեկությունը, հետազոտական մեթոդների կիրառումը, փաստական նյութը դասակարգելու, վերլուծելու, գնահատելու կարողությունը վկայում են ուսանողների հետ համապատասխան ամբիոնների կատարած հանգամանակից և երկարատև աշխատանքի մասին: Ամբիոնները մեծ ջանք էին գործադրել ավարտական աշխատանքների թեմաների ընտրության և դրանց իրականացման գործում, քանի որ նկատելի էին գիտական խնդիրների, դրանց լուծումների հստակ շարադրում և կիրառում արդի գիտակարգերում: Հատկապես կարևորում ենք այն փաստը, որ ավարտական աշխատանքները կազմված էին գիտական գրագրության կանոններին համապատասխան: Ընդհանուր առմամբ ցանկանում ենք փաստել, որ համապատասխան ամբիոնների դասախոսները լավագույնս են իրականացրել իրենց պարտականությունները, այն է՝ ավարտական աշխատանքների ղեկավարման և գրախոսման աշխատանքները. գրախոսություններում անաչառորեն վեր էին հանված վրիպակներն ու թերությունները, արված էին ուսանելի դիտարկումներ և առաջարկություններ, որոնք օգնում էին հանձնաժողովին աշխատանքը գնահատել ոչ միայն փաստացի աշխատանքի և դրա ներկայացման հիման վրա, այլև գրախոսների կարծիքները նկատի ունենալով:

Հատկապես կարևորում ենք ժամանակակից հայոց լեզվի ամբիոնի /վարիչ Յ. Ավետիսյան/ կատարած հսկայածավալ աշխատանքը /աշխատանքների մեծ մասի թեմաները առաջադրված էին այդ ամբիոնի կողմից/: Ամբիոնի կողմից առաջարկված թեմաներն աչքի էին ընկնում թե՛ արդիականությամբ և՛ թե՛ բազմազանությամբ. առաջադրված էին անգամ հայ լեզվաբանության մեջ չուսումնասիրված թեմաներ, և ուսանողները հիմնավորված ներկայացնում էին իրենց ուսումնասիրությունները: Հարկ է շեշտել նաև այդ աշխատանքների՝ գիտական գրագրությանը համապատասխան ձևակերպված լինելը: Մա փաստում է այն մասին, որ ժամանակակից հայոց լեզվի ամբիոնը, որի վրա էր դրված ավարտական աշխա-

տանքների մեծ մասի պատասխանատվությունը, կատարել է հետևողական և ամենօրյա տքնաջան աշխատանք:

Վերոգրյալը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է այսուհետև ևս ավարտական աշխատանքների համար այնպիսի թեմաներ առաջադրել, որոնք արդիական են և բխում են հայերենագիտության առկա հիմնախնդիրներից: Թեմաներ առաջադրելիս հարկ է առավել մեծ ուշադրություն դարձնել գուգադրական բնույթի աշխատանքներին՝ կարևորելով ուսանողների ինքնուրույն վերլուծական կարողություններն ու գործնական հմտությունները դրսևորելու փաստը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ավարտական աշխատանքների թեմաների ձևակերպումները երբեմն ընդհանրական բնույթ էին կրում և թեկնածուական կամ դոկտորական աշխատանքների վերնագրեր էին հիշեցնում, երբեմն նկատվում էր ավարտական աշխատանքի վերնագրի և բովանդակության անհամապատասխանություն, կարծում ենք, անհրաժեշտ է ավարտական աշխատանքների թեմաները քննարկել ամբիոնների նիստերում թեմաների հետ կապված թյուրըմբռումներից խուսափելու համար:

Անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել բակալավրիատի ավարտական աշխատանքների կատարման որակին՝ կարևորելով դրանցում փաստական նյութի վերլուծությունը, դասակարգումը և գուգադրումը, փաստարկված դատողությունների ու եզրահանգումների առկայությունը, առկա հիմնախնդիրների լուծման ասպարեզում ժամանակակից մեթոդաբանության կիրառումը: Հարկ է մեծացնել նախնական խորհրդատվությունների քանակը ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների համար, հստակեցնել աշխատանքի կատարման ընթացքի վերահսկողության մեխանիզմները, մշտադիտարկումների ժամանակ քննարկել ներկայացված աշխատանքի կատարման ծավալը և մակարդակը՝ շեշտադրելով խնդրահարույց հարցերը, մեծացնել դասախոսների պատասխանատվությունը թեզերի հետ կապված աշխատանքների նկատմամբ, կիսամյակային հաշվետվությունների ժամանակ չբավարարվել ուսանողի կողմից ներկայացվող և ղեկավարի կողմից հաստատվող հաշվետվային փաստաթղթով, այլ պահանջել ավարտական աշխատանքի համապատասխան բաժինների էլեկտրոնային տարբերակները:

Կարևոր ենք համարում նշել, որ, ինչպես նախորդ, այնպես էլ 2017-18 ուստարվա ավարտական աշխատանքների պաշտպանության գործընթացը ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում կազմակերպված էր պատշաճ մակարդակով, պահպանված էին ընթացակարգային բոլոր պահանջները: Հատկապես ցանկանում ենք բարձր գնահատել բանասիրական ֆակուլտետի դեկան Ա. Ավագյանի կատարած մեծ աշխատանքը, որի արդյունքում պետական քննական հանձնաժողովի աշխատանքները ընթացել են դեկանատի կողմից սահմանված ժամանակացույցի համապատասխան, քննական կարգի խախտումներ չեն եղել, և ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովն աշխատել է գործնական և փոխադարձ վստահության մթնոլորտում»:

Օրակարգի **2-րդ հարցի`** 2017-18 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկման համար ելույթ ունեցավ դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը: Վերջինս նշեց, որ թեև քննաշրջանի ավարտին մնացել է 2 օր, այնուամենայնիվ արդեն կարելի է արձանագրել, որ չեն եղել ընթացակարգային շեղումներ կամ խախտումներ, և ամեն ինչ ընթացել է բնականոն հունով` հիմնականում գոհացուցիչ արդյունքներով:

Օրակարգի **3-րդ հարցը** նվիրված էր հայոց լեզվի և ընդհանուր լեզվաբանության ամբիոնների վարիչների թափուր տեղերի համար հայտարարված մրցույթի անցկացմանը:

**Լ Ս Ե Ց Ի Ն** – Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Յուրիկ Սրապիոնի Ավետիսյանի** մասնակցելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Վ. Գաբրիելյանը և Ալ. Մակարյանը:

Ֆակուլտետի գիտխորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Ա. Աբաջյանն իր հաղորդման մեջ նշեց, որ հայոց լեզվի ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցելու հավակնորդը մեկն է` բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յու. Ավետիսյանը:

Նշվեց, որ Յու. Ավետիսյանը 2013-2018 թթ. եղել է հայոց լեզվի ամբիոնի վարիչը, 2008-ից մինչ 2012-ը դեկավարել է ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնը` լինելով նրա հիմնադիրը: Հայոց լեզվի ամբիոնը բարձր է գնահատում ոչ միայն նրա գիտական ներուժը, այլև

կազմակերպչական մեծ ջիղը: Ավետիսյանը հեղինակ է գիտական բազմաթիվ հրատարակումների /ցուցակը կցվում է/: <<Դասախոսն ուսանողի աչքերով>> սոց. հարցման վերջին հինգ տարիների արդյունքը 4.61 միավոր է:

Հայոց լեզվի ամբիոնի՝ հունիսի 25-ին կայացած նիստում, որին մասնակցում էին ամբիոնի 33 անդամներից 28-ը, բաց քվեարկությամբ միաձայն ընտրվեց միակ թեկնածուն:

Հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհուրդը ևս պաշտպանում է Յու. Ավետիսյանի թեկնածությունը:

Գիտական խորհուրդն այնուհետև լսեց հավակնորդի ծրագրային ելույթը:

Փակ-գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց ձայներ հաշվող հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

1. Գաբրիելյան Վազգեն – նախագահ
2. Տեր-Մինասյան Աշոտ
3. Հովակիմյան Հովհաննես

Փակ-գաղտնի քվեարկությունից հետո նախագահ պրոֆ. Վ. Գաբրիելյանը հրապարակեց արդյունքները.

Խորհրդի 36 անդամներից նիստին ներկա են եղել և քվեարկությանը մասնակցել են 34-ը:

Բաժանվել է 34 քվեաթերթիկ:

Քվեատուփում հայտնվել է 34 քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

1. Ավետիսյան Յուրիկ կողմ – 33 դեմ – 1 անվավեր – 0

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.**- 1. Հաշվի առնելով փակ-գաղտնի քվեարկության արդյունքները՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Յուրիկ Սրապիոնի Ավետիսյանին** ընտրված համարել հայոց լեզվի ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. Միջնորդել համալսարանի ռեկտորատին՝ հաստատելու հայ բանասիրության ֆակուլտետի խորհրդի որոշումը և գործող կարգի համաձայն՝ նրա հետ կնքելու աշխատանքային պայմանագիր:

**Լ Ս Ե Ց Ի Ն** – Հայ բանասիրության ֆակուլտետի ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Վարդան Ջորիկի Պետրոսյանի** մասնակցելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Լ. Հովսեփյանը և Ալ. Մակարյանը:

Ֆակուլտետի գիտխորհրդի մրցույթային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Ա. Աբաջյանն իր հաղորդման մեջ նշեց, որ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցելու հավակնորդը մեկն է՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Վարդան Ջորիկի Պետրոսյանը**:

Նշվեց, որ Վ. Պետրոսյանը 2013-2018 թթ. եղել է ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչը, այդ ժամանակահատվածում իրեն դրսևորել որպես գիտամանկավարժական կյանքի հմուտ կազմակերպիչ: Հեղինակ է բազմաթիվ գիտական հրատարակումների /ցուցակը կցվում է/: <<Դասախոսն ուսանողի աչքերով>> սոց. հարցման վերջին հինգ տարիների արդյունքը 4.67 միավոր է:

Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի՝ հունիսի 25-ին կայացած նիստում, որին մասնակցում էին ամբիոնի հինգ անդամներից հինգը, բաց քվեարկությամբ միաձայն ընտրվեց առաջադրված միակ թեկնածուն:

Հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհուրդը ևս պաշտպանում է Վ. Պետրոսյանի թեկնածությունը:

Գիտական խորհուրդն այնուհետև լսեց հավակնորդի ծրագրային ելույթը:

Փակ-գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց ձայներ հաշվող հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

1. Գաբրիելյան Վազգեն – նախագահ
2. Տեր-Մինասյան Աշոտ
3. Հովակիմյան Հովհաննես

Փակ-գաղտնի քվեարկությունից հետո նախագահ պրոֆ. Վ. Գաբրիելյանը հրապարակեց արդյունքները.

Խորհրդի 36 անդամներից նիստին ներկա են եղել և քվեարկությանը մասնակցել են 34-ը:

Բաժանվել է 34 քվեաթերթիկ:

Քվեատուփում հայտնվել է 34 քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

1. Պետրոսյան Վարդան կողմ – 32 դեմ – 1 անվավեր – 1

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.**- 1. Հաշվի առնելով փակ-գաղտնի քվեարկության արդյունքները՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Վարդան Զորիկի Պետրոսյանին** ընտրված համարել ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. Միջնորդել համալսարանի ռեկտորատին՝ հաստատելու հայ բանասիրության ֆակուլտետի խորհրդի որոշումը և գործող կարգի համաձայն՝ նրա հետ կնքելու աշխատանքային պայմանագիր:

**Ընթացիկ հարցերում՝**

**Լ Ս Ե Ց Ի Ն** - Ֆակուլտետի դեկան, հայ նորագույն գրականության ամբիոնի պրոֆեսոր, բ. գ. դ. Արծրուն Աբգարի Ավագյանի կազմած՝ «Վահան Թեքեյան. Ազնվական քերթողը» խորագրով ժողովածուն տպագրության երաշխավորելու հարցը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – Պրոֆ., պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ժ. Քալանթարյանը, Ս. Մուրադյանը, դոց. Ս. Գրիգորյանը:

Նշվեց, որ պրոֆ. Ավագյանը տարիներ շարունակ զբաղվել է սփյուռքահայ նշանավոր գրող Վահան Թեքեյանի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությամբ, կարդացել նրան նվիրված դասախոսություններ, հանդես եկել գիտական հոդվածներով ու զեկուցումներով: Ժողովածուն կազմված է Վ. Թեքեյանին վերաբերող Ա. Ավագյանի երեք ծավալուն գիտական հոդվածներից, նախաբանից, Թեքեյանի վաթսուկոթ քերթվածներից և մեծ գրողի մասին հայ մի շարք մտավորականների ու գործիչների կողմից գրված կարծիքներից: Ժողովածուն գրված է ժամանակաշրջանի, արևմտահայ և սփյուռքահայ պոեզիայի հետ Թեքեյանի ունեցած առնչությունների վերհանման սկզբունքով: Արծրուն Ավագյանի կազմած



«Վահան Թեքեյան. Ազնվական քերթողը» գիրքը կարևոր ավանդ է սփյուռքահայ գրականության պատմության մեջ:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** – Արծրուն Ավագյանի կազմած՝ «Վահան Թեքեյան. Ազնվական քերթողը» ժողովածուն երաշխավորել տպագրության և այն հրատարակելու հարցով միջնորդել համալսարանի հրատարակչության խորհրդին:

Գիտական խորհրդի նիստի վերջում նախագահ Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց բոլոր ներկաներին և նիստը համարեց փակված:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**